

ՄԱՍԻ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԵԿՈՒԻ ԱՍԵՆ ՇԱՐԱԹ ՕՐ

ՏՆՕՐԸՆ - ԽՄԲԱԳՐԱԳԵՏ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱԳ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Դաւառներ

40 Ղրուշ

Ռուսաստան

4 Րուպլի

Եւրոպա

10 Ֆրանք

ՀԱՍՏԵ

Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, քիւ 3-4

ՆՈՒՐԵԱՆ ԷՓԵՆՏԻ

Բերայի թաղային գործերը յաջող ճամբու մէջ չեն, յորմէհետէ իր թաղական խորհուրդին նախկին ատենապետը իր վրանին տակ առանձնացած է, քէն պահող Աքիլէսի մը պէս:

Իր ձեռներէյ ոգին, իր սրտազընգող ձայնը, իր համոզիչ լեզուն՝ որ այնքան հրաշքներ գործեցին՝ չի կանալ: Իր հեռացումէն ձեռացած մեծ պակասը՝ միշտ պարապ կը մնայ՝ հակառակ՝ թաղականներու ստուար թիւի մը որ իր մեկնելէն ի վեր թաղային գործոց մատակարարութիւնը ձեռք առած է:

Նուրեան Էֆէնտիի կոյր կուսակից մը չեմ: մէկէ աւելի հական խնդիրներու համար մինչեւ վերջը տարակարծիք մնալուն պարտաւոր եմ: Բայց իր

գործունէութեանը վրայ անկեղծապէս կը զմայլիմ:

Բերայի արհեստանոցը ինքը հիմնեց եւ ինչ ալ ըլլայ անոր արդի վիճակը, նոյն իսկ արհեստանոց մը հիմնելու գաղափարը պատիւ կը բերէ իր հեղինակին:

Նուրեան Էֆէնտիին անոնցմէ չէ որոնք իրենց պատկանած հասարակութեան գործերուն խառնուիլ չեն ուզեր: Ընդհակառակն, այդ գործերուն հոգածու գանուած է միշտ՝ վատնելով շուայելով իր ժամանակը, առանց ազմահի, առանց պարծանքի, առանց հռչակել ուզելու իր զոհողութիւնը որ ապաքէն պարտականութիւն մըն է, բայց ո՛րքան հազուադիւր են պարտականութիւնին ճանչցող անհասները, մանաւանդ ընկերական սանդուղին բարձր աստիճաններուն վրայ:

* * *

Ինչո՞ւ Բերայի թաղը այս մեծ գործունեան անտեսէ. իր տուած երախ-

տեայ փոխարէնն եղող վարձատրութիւնն է միթէ այս մոռացուի՞ր, մանաւանդ այն պահուն ուր այս թաղին գործերը տանող ալեկոծիկ նաւակը ընկողմէր մօտ է:

Ո՛վ կրնայ պարծիլ իրմէ քաջ դեկավար մը գտնելու, և ի՞նչ անհասկընալի գաղտնիք է որ Նուրեան էֆէնտիի նման մեծ անհատականութեան մը փորձեալ կարողութեանը ու եռանդին կոչում չըլլուի: Վա՛խ կայ որ իր ներկայութիւնը չնսեմացնէ կարգ մը պղտիկ փառասիրութիւններու ազօտ լոյսերը:

Բայց հեռուէն ալ, մանաւանդ թէ հեռուէն, նախորդ ատենապետը այն փարոսի լոյսը կը յիշեցնէ որուն պիտի ուղղուին միշտ շուարած նաւորդներու աչքերը:

* * *

Մեր եզրակացութիւնը պարզ է. Բերայի թաղային գործոց բարւոքութիւնը Նուրեան էֆէնտիի ներկայութեանը կը կարօտի. իր մինակը տարած բեռը միշտ ծանր պիտի դայ բոլոր ժողովներու, մասնաժողովներու համախմբումին:

Ամեն բանէ առաջ պէտք է անկեղծ ըլլանք ու ճանչնանք որ իր թողած պարապը իրմով միայն կրնայ լինալ:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ԼԵԶՈՒԱՔՆՆԱԿԱՆ

ՄԱՍԻՍԻ յունուար 16ի թուով առաջարկուած հարցման ի պատասխան, ստացած ենք զանազան յօդուածներ, որոցմէ երկու կարեւորագոյնները կը հրատարակենք այսօր: Ձեռն/հաս անձներէ մեր ստանալիք ուրիշ պատասխաններն ալ պիտի հրատարակենք հետզհետէ:

Լեզուները ստեղծողն կամաւոր արուեստը չէ: Երբ Վօրաբիւքն յաջողի՝ առաջին բացառութիւնը պիտի կազմէ:

Լեզուներ կ'սկսին հասարակ խօսակցութեամբ, և այդ վիճակին մէջ «աշխարհաբար» են, այսինքն է «խօսից բարբառ»: մոռադրութեամբ և մանաւանդ զրութեամբ կը մշակուին և կը լինին «զրաբար», այսինքն է «զրոց բարբառ»: Այդ եղելութեանց գործիչը քաղաքակրթութիւնն է:

Լեզուներ երկու տարբեր ուղղութեանց հետեւելով կ'սկսին երկճղիլ: Երբ մի կողմանէ խօսից բարբառը կը փոփոխուի կենցաղական պատճառներով, զորօրինակ զրացութեամբ, գաղթականութեամբ ևն. միւս կողմանէ զրոց բարբառն ալ կը փոփոխի կամաւորական պատճառներով, զորօրինակ փոփոխութեամբ, գրականութեամբ ևն: Որչափ զօրաւոր են այդ առթական պատճառներ՝ այնչափ լեզուի մը երկու ճիւղերը դարամէտ ուղղութեամբ կ'ընթանան, և խօսից բարբառն զրոց բարբառէն կը տարբերի:

Նոր ժամանակաց սովորութիւն է խօսից բարբառէն հատուածներ նոյնութեամբ ի գիր առնելով՝ պահել առանձինն իբր թանգարանական կամ հետաքրքրական նիւթեր: Իսկ զրոց բարբառները նովին իսկ որ դրական կեանք ունին, ժամանակի եղծիչ զօրութեան կը յաղթեն և նոյնութեամբ կ'ապրին դարէ ի դար, մինչ խօսից բարբառները շարունակեալ այլայլութեամբ անզգալաբար կը փոփոխուին:

Հիմերուն յաջորդող նոր խօսից բարբառներն իբրեւ մի նոր լեզու նոր գրականութիւն կ'ստանան, և այսպէս անոնց համապատասխանող զրոց բարբառներ կը կազմուին:

Աշխարհի գլխաւոր և ծաղկեալ լեզուք այդ ընթացքն ունեցան, հայերէնն ալ այդ ընթացքէ դուրս չէ կարող լինել:

Գրաբար մը հասած է մեզ, որ ստոյգ տասնեակինգ դարուց հնութիւն կը կրէ, աւելին ալ անհաւանական չէ: Այդ գրաբարը կամաւորապէս ստեղծագործեալ լեզու մը չէ. այլ նոյն ժամանակի խօսից բարբառին դարամէտ ճիւղն է: Այսօր ալ հայերէնը՝ խօսից բարբառներ ունի մէկէ աւելի, որք ընդհանրաբար մեր աշխարհաբարը կը կազմեն, և այդ աշխարհաբարին հետ դարամէտ ուղղութեամբ

գրոց բարբառ մըն ալ կայ, զոր կը գործածեն ի գիր, այլ ոչ ոք ոչ ուրեք կը խօսի գայն, իսկ եթէ երբեմն գրական անձ մը ատենաբանութեան բեմին վրայ:

Ո՛րչափ էր խօսից բարբառին գրոց բարբառէն դարամիտութիւնը Հինգերորդ դարու սկիզբը և որչափ է այժմ ինն և տասներորդ դարու վերջը: Այժմեանը փորձառութեամբ կրնամք չափել իսկ Հինգերորդ դարուն խնդրոյն լուծումը, քանի որ ի գիր առեալ հաստատուն նմոյշ մը չունիմք ձեռունիս, մակաբերական զըննութեանց կը մնայ, և կարծիքներ կարող են տարբերիլ:

Միայն թէ նկատելի է որ այժմ ալ «գ» նախդիրը, «նախադասութեանց» յառաջ գրուելը, «որ» յարաբերականը, հոլովմանց տարբերութիւնը, ևլն., որք հին գրաբարին յատկանիշները կը սեպուին, տակաւին կենդանի կը մնան խօսից բարբառներուն մէջ, մանաւանդ հայ լեզուին բնավայր եղող գաւառներու մէջ:

Իսկ թէ ո՛ր գաւառին խօսից բարբառը՝ մեզ հասած գրոց բարբառին հիմ կազմեց, ճշգրիտ տեղեկութիւնք թերի են. միայն թէ կը դիտեմք թէ հին գրաբարի պետերուն մեծամասնութիւնը Տուրուբերանցի էր, թէ գործածութեան առպարէզը Արարատցին տուաւ, և թէ երկու բարբառներուն միջինն և զօգիչն է Վասպուրականցին: Արդեամբ ալ այդ երեք նահանգներուն այժմեան խօսից բարբառներուն մէջ կը տեսնուին հին գրաբարին յատկանիշները, երբեմն ամբողջութեամբ և երբեմն մերձաւորութեամբ:

Արմաշ, 2 փետր. 1893

41րդ տարեդարձ

սկզբնաւորութեան «Մասիս»ի

ՄԱՂԱՔԻԱ. ԵՊԻՍԿ. ՕՐՄԱՆԵԱՆ

Լեզուն՝ որով գրեցին Թարգմանիչք մեր ի Ե դարու՝ կը տարբերէր մասամբք ինչ այն լեզուէն՝ որ Ոստանիկ անունն կը կրէր և կը խօսուէր Այրարատայ մէջ և ի չըջակայս: Այդ խօսուած լեզուին եւ «եզեր սկան» գաւառաբարբառներու մէջ պատճառ մը չկայ մեծ խտիր մը ենթադրելու:

Գրուած լեզուն (գրաբարն) կը տարբերէր խօսուած լեզուէն չարագասութեան ձեւերով բարդումներով, և քերականական ինչ ինչ կանոններով՝ որք յունականէն փոխառութիւն մ'էին, և որք չէին ըստնաներ սակայն լեզուին ընդհանուր ոգւոյն, և կամ անիմանալի մնալու չափ խրթին և օտարոտի չէին հնչէր հայ ականջաց. — բացառութիւն է անշուշտ այն յունամոլ արուեստաւորութիւնն՝ որ յետոյ ապա եղծեց գրաբարի ներքին յօրինուածութիւնը:

«խօսուած գրաբար» ի մը ինդրոյն աւելի մօտ երթալու համար՝ կարեւոր է սա հարցումը ընել. — Հինգերորդ դարու հայ մատենագրութիւնն ունեցած է իւր նախընթացը, այսինքն այլք յառաջ քան զգիւտ գրոց գրած են այն լեզուաւ զոր ի կիր արկին Թարգմանիչք՝ աշակերտք Սահակայ և Մեսրոպայ: Ըստ իս, այդ հարցման պատասխանն բացասական է, և գրոց լեզուին (գրաբարին) սկզբնակէտն կը համարուի նոյն իսկ գրոց գիւտը. ի վերայ այսր ամենայնի՝ գրաբարին մէջ մուտ գտած ինչ ինչ օտար ձեւերն՝ յորս տկնարկեցինք՝ հարկ չէ գրաւոր Թարգմանութեանց հետ ժամանակակցաբար յերեւան եկած համարել, այլ յայդմ մեծագոյն բաժին մը պէտք է տալ անգիր Թարգմանչաց խմբին՝ որ իւր գործը շարունակած էր՝ ամբողջ դար մը՝ մինչեւ ի գիւտ նշանագրաց, և բուն մեր Թարգմանիչք հետեւողք են այդ դպրոցին: Վերջինք նորութիւն մը չստեղծեցին, լեզուի մասին ամէն ինչ պատրաստական էր նոցա, առանց որոյ կարելի չէր որ՝ ի միջի այլ և՛ այլ պատճառաց՝ «փութանակի» Թարգմանէին զԱստուածաշունչ գիրս (Կորին և խորենացի), պահելով լեզուի նոյնութիւն և միութիւն ծայրէ ի ծայր:

Կրնանք ըսել թէ այժմեան աշխարհաբարը համեմատաբար աւելի մօտ է ժողովրդային լեզուին հանգամանաց՝ գէթ ըստ քերականական դասաւորութեան, քան գրաբարն՝ արտադասական այն դաւառաբարբառին, որ կը խօսուէր և բունն եղաւ գրոց լեզուին:

ԵՂԻՇԷ Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԵՆ

ՎԼԻԲԵՐԵՐ ԵՒ ՖԱԼՍՓՈՒՅ

Յունուար 16ին, Բարիզ, Օբեռա Գոմի-
բի թատրոնին մէջ, «Վէրթէր»ը կը ներ-
կայացնէին, Կէօթէի վէպին վրայ ձեւ-
ուած քնարերգական տուամ մը, որուն ե-
րաժշտութիւնը գրած է Ժիւլ Մանէ: Այս
նշանաւոր արուեստագէտը այն երաժիշտ-
ներէն է, որոնք ֆրանսական գեղարուես-
տը պանծացուցին դարավերջին մէջ, և
իր նոր երկը, «Սիտ»էն և «Մոգ»էն ետքը,
փառաւոր յաջողութիւն մըն է եղեր Ֆրան-
սայի երաժշտական դպրոցին համար: Բա-
րիզի աշխարհիկ թերթերը մեծ հիացումով
կը խօսին Մանէի գործին վրայ, և այս
առթիւ մտքերու մէջ կ'արթննայ Կէօթէի
միշտ նոր, միշտ հզօր այն վէպը, որ այն-
քան երիտասարդ գերմաններու սիրատանջ
սրտին մէջ դրաւ երբեմն անձնասպանի
վայրագ կորովը:

Ո՞վ մեզմէ՝ իր պատանեկութեան՝ չէ
կարդացած այդ սիրավէպը որուն այնքան
յաջող մէկ թարգմանութիւնը հրատարա-
կած է Մամուրեան, նշանաւոր յառաջա-
բանով մը: Մեզմէ որի՞ն առաջին տարի-
ներուն երազները չէ փայփայած այդ
մատենին ախտաբոյր ախտաւարակ հը-
րապոյրը, այդ մեղապարտ ուէրը որ մահ-
ուան սուսերին մէջ միայն ապաստան կը
գտնէ: Եւ ի՞նչ անուշ յիշատակ է այն
զօր պահած ենք Շարլօթէն, գերմանացի
կնկան այն հրաշալի տիպարը, իր պատի-
ւին վրայ գուրգուրանքով համակ տոգոր-
ուած, հզօր իր տկարութիւններուն մէջ
անգամ, պարտքի գաղափարին առջեւ հը-
րայրքն ու խանդը խեղդելով հոգիին խորը:

Մանէի դաշներգը վերջին անգամ
յիշեցուց ինծի Կէօթէի վէպը, զրադարա-
նիս անկիւնը մոռցուած՝ նորէն կարգացի
զայն: Կ'ուզէ՞ք որ խոստովանութիւն մը
ընեմ ձեզի: Այդ հատորը այնքան հաճոյք
տուաւ ինծի, որչափ նոր հեղինակներու
գործերուն մէջ քիչ երկեր կըցած են տալ,
հակառակ անոնց արուեստին նըբասէր

ճարտարութեան: Անո՞ր համար արդեօք
որ առանց նազանքի, առանց կապանքի,
ջրվէժի մը առոյգ խրոխտ վազքին պէս,
հանճարը այդ էջերուն վրայ կը տարած-
ուի. ի՞նչ յստակութիւն, բնականութիւն,
խանդաղատանք, ամեն տողին մէջ, մար-
դը զոր արուեստագէտը չը նսեմացներ,
կեանքը՝ ապրուած կեանքը, տառապան-
քին շեշտը որ սրտին խորէն կը լսուի, դժ-
բախտ սիրոյ մը թոյնին բոլոր մահաշունչ
չարչարանքները:

Այսօր, նոր գրողներուն քով, մանա-
ւանդ Ֆրանսայի մէջ տիրապետող արդի
գրագէտներու գրուածներուն մէջ, ա'լ չի-
կայ նոյն ազապատանքը, նոյն գուրգու-
րանքը կարծես: Արուեստին հոգը միայն,
արուեստին տիրապետութիւնը: Թեւերը,
չքնաղ փայփուն գոհարներով ծանրա-
բեռնուած, ա'լ չունին կարծես նախկին
թափին աշխոյժը:

Գրական այն նոր ուղղութեան դէմօր
Ֆրանսայի գրականութիւնը առաջնորդեց
մինչեւ անկապալտութիւն, և խորհուր-
դի գրականութիւնը ստեղծեց, մագերու
կրօնքին պէս խրթին, բարեբախտաբար
հակադրծութիւնն սկսած է արդէն, նոյն
խիկ Ֆրանսայի մէջ: Եւ իրաւ, բոլոր այն
գրուածները, որոնց մէջ ճիգը կը մատ-
նուի, ուր մտքին խաղերը գերլիխան են
աւելի քան սրտին զգայութիւնները և բը-
նական շեշտին հրապոյրը, մոռացումի կը
մատնուին, և գիբերու դէզին մէջ միշտ
կանգուն կ'երեւան, հանճարին շունչովը
կենդանի, պարզ, անսեթեւեթ այն երկե-
րը, որոնք, ինչպէս «Վէրթէր»ը, «Բօլ և
Վիրթինի»ն, «Մանօն Լէսքօ»ն, «Ռաֆա-
յէլ»ը կամ «Գամէլիազարդ Տիկին»ը, սե-
րունդէ սերունդ կ'անցնին առանց կոր-
սնցունելու իրենց առաջին շնորհը, ծո-
ղեղրի ժայռերուն պէս որոնք միշտ ան-
խարխար կը հսկեն, մինչ փրփրուն ալիք-
ները կը փչրուին իրենց ներքեւ, առանց
հետք մը թողու:

«Վէրթէր»ը, քնարերգական տուամի
վերածուելով, կը յիշեցնէ այն իրական
անձերը որոնց կեանքէն ներշնչուած Կէօ-
թէ գրեց իր վէպը: Գիտէ՞ք որ անոր դիւ-
ցազնուհին իրապէս ապրած է և վէպին

մէջ կը կրէ այն անունը , զոր իրական կեանքին մէջ կը կրէր, Շարլօթ . Կէօթէ հանդիպած է անոր 1772ին , չորս ամիս ապրած է Վէրթէրի կեանքը և գրքին ըստուարագոյն մասին մէջ իր իսկ զգացողութիւններն է որ գրի առած է , թերեւս օրը օրին գրուած , տեսակ մը ինքնակենսագրութիւն : Իրական Շարլօթը 1773ին կ'ամուսնանայ Քէսթլէռի հետ և 1828ին կը մեռնի, Հանսվրի մէջ :

* * *

Երբ Մասնէի «Վէրթէր»ը Ֆրանսայի շօվէններու ազգասիրական զգացումները կը գգուէ ֆրանսական երաժշտութեան մէկ փառաւոր յաղթանակովը , անդին , Միլանի մէջ , դարուս երաժիշտներուն ամենէն բեղմնաւորը , «Թրավիաթա»ի , «Ռիկօլէթթօ»ի , «Օթէլլօ»ի հեղինակը , իր նոր երկովը խաղաղական երաժշտութեան նոր փայլ մը կուտայ : Ութսունամեայ երաժշտագետը , իր քառասուն քնարերգական երկերուն թափնիներէն չը յափրացած դեռ , նոր սեռ մը փորձեր է , քնարերգական կատակերգութեան սեռը : Վէրտիի նոր գործը , «Փալաթաֆ» , որուն նիւթը քաղուած է Շէքսպիրի մէկ կատակերգութենէն , ընդհանուր խանդի ցոյցերով ողջունուեր է խաղաղական ժողովուրդէն , որ «Գալաիէնա Ռուսթիքանայ»ի յաջողութենէն ի վեր առաջին անգամ է որ իր ազգային երաժշտութեան մէկ անվիճելի յաղթանակը կը ծափահարէ :

Խաղաղական երաժշտութիւնը՝ վերջին տարիներուն մէջ՝ երաժշտագէտներու յարգանքին մէջ շատ բան կորսնցուց : Վակների դպրոցը , իր գիտուն և նուրբ խաղերով եկաւ վերջ տալ այն հիացումին զոր այդ երաժշտութիւնը , այնքան մեծ վարպետներու գործերուն մէջ , կրցած էր երբեմն ներշնչել : Նոյն իսկ «Այտայ»ի հեղինակը , նախանձելով իր գերման մրցակիցին , այդ գիտուն երաժշտութեան տենչախան ունեցաւ վերջին տարիներս :

Սակայն պիտի ներքէք երբ ըսեմ ձեզի թէ խաղաղական երաժշտութիւնը ինծի պէս դեռ շատ տգէտներու համար է և

կը մնայ միշտ սրտի երաժշտութեան մտատիպարը : Բանի տեղ չը պիտի գնեմ այն ծիծաղները՝ որոնք կը դժուին ահա հմուտ երաժիշտներու շուրթերուն վրայ , և պիտի արհամարհեմ մանաւանդ անոնց ծաղրը , որոնք այդ հմուտներուն համակարծիք երեւալու համար միայն Վակնէռի երաժշտութեան խրթին ներդաշնակութեանց խունկ կը ծխեն , թերեւս առանց իսկ ըմբռնելու զանոնք : Զէ' , ես չեմ կըրցած երբեք հասկնալ հրապոյրը այդ երաժշտութեան՝ որուն համար կ'ըսէին դեռ քիչ առաջ թէ ապագայինը պիտի ըլլայ , և որ ահա ներկային ալ երաժշտութիւնը կը դառնայ :

Ամեն անգամ որ ունկնդրած եմ Թանհաուզերի կամ Լօհէնկրինի երաժշտական հատուածներուն , զգացած եմ թէ հոյակապ բան մը կայ երաժշտական խաղերուն այդ հրաշազան յարգարումին մէջ , գործիներու այդ ահագնադրող գոռումներուն և յանկարծական նուազումներուն մէջ , որոնք նախանձաբեկ սիրավառ սրտի մը զղջումի պաղատանքներուն պէս կը յաջորդեն զայրոյթի ազդակներուն : Եւ սակայն մտաւոր ընդարմացումի մը զգայնութիւնը ունեցած եմ միշտ Վակնէռի նախասիրած չեփորներուն միահամուռ , սիրապետող նուագին ունկնդրելով , ներդաշնակութիւն մը որ ականջին հեշտութիւն տալէ աւելի , մանուածապատ անըմբռնելի մեղեդիներով ցաւ և յոգնութիւն կ'ազդէ գրեթէ : Զիգեր ըրած եմ , հասկնալ յուսացած եմ , և վերջ ի վերջոյ ինքզինքիս խոստովանած եմ թէ այդ երաժշտութիւնը անտարբեր թողած է դիս , թէ խանդաղատանքի թելերը չեն թրթռացած որտիս մէջ , անզգայ մը գտնուած եմ , ջղային դրութեան վիթացումին ենթակայ տարաբախտ մը թերեւս :

Բայց այն երաժշտութիւնը , ուր արուեստին այդ ճոխերանդ նրբութիւնները չեն ճապաղեր մեղեդիին պարզութիւնը , ուր սրտին աղաղակը կը ըսեմ այնպէս՝ ինչպէս սիրտը դուրս կուտայ զայն , ուր բնութեան ձայներուն միայն վերյուշումները կ'ունենամ , այն երաժշտութիւնը սրտիս հետ կը խօսի , էութեանս ամենէն

խորունկ ալքերուն կ'իջնէ, գուրգուրանքի ամենէն թաքուն խաւերը կը բլբլէ հոն, յարումի, սիրոյ, անձնութեան խանդին կեանք տալով հողիւ մէջ:

Ա՛լ ինձ ի՞նչ փոյթ եթէ նուրբ արուեստին սիրահարները «Լօհէնկերն»ը գերազանց գտնեն «Ռիկօլէթթօ»յէն կամ Վակ-նէսը գերադասեն Վէռտին:

ԱՐԱՔԱ

ՊԵՐՃՈՒՅԻՆԵՐԸ

Արծաթ ջահերը վառուած են արդէն, Ու երկու տիկնայք որ երկու վարդ են, ձօխ դահլիճէն ներս կը մտնեն զգուշ. Մին վառվուռն է եւ միւսը բնուշ, Յափըացած, տենդոտ, մեղկ ու փափկասուն՝ Ամեն ձիւրքն ունին բաղդաւոր դասուն. Մինակուկ են դեռ ու վեր վար ճեմեն Շաղակըատելով. Թատրոն կամ հիմէն Յագուրդն է իրենց մտաւոր կեանքին:

Արծան մը փորըիկ՝ ձեռակերտ անգին, ձարտար բանդակուած, յանկարծ զըրաւէ իրենց նայուածքը. Թէեւ պարզ կաւէ Բայց շինուած է նուրբ եւ գողտրիկ այնքան Որ տեսնողները ապշին՝ հիանան. Եւ կը պատկերէ կըրտիկ՝ գիւրուկ Ջարածըճի Սէրն՝ անաւակ մանուկ: Պերճուհիները պահ մը կը դիտեն Ու Թեթեւ ժպտին. ո՛հ իրենց սրտէն Շատունց վաներ են սէրը՝ այդ անուշ կարծրված՝ բայց սին զգացումն ապուշ. Թոյլ սրտերուն լոկ վառի սէրն անշէջ Ջոր իրենք մարեն համոյքներու մէջ:

Աչքերնին յետոյ դարձնեն նուազ Բնեկու համար պատկեր մը չքաղ Ուր նկարուած է վրձնով մը ջատուկ Մայր մը դեռատի, գեղեցիկ, փափուկ Որ սիրտը հեւ հեւ դողայ՝ գուրգուրայ Դեռ նոր ոտք ելած իր գաւկին վըրայ, Ու համրէ անոր քայլերը վատոյժ. Ուրախ անձկութիւն, կեանք, երանգ, աշխոյժ, Կտաւին վըրայ ցանուած հոս ու հոն՝ Հոգւոյն մէջ բանաս կապոյտ հորիզոն: Պերճուհիները իբր հետաքրքիր Ակնարկ մը նետեն ցուրտ՝ անկարեկիր. Այն սուրբ եւ ամբիժ հրճուանքն ու գորով Ձեն զգար բնաւ, ու մայր անունով Հեգնեն ու ծաղրեն այդ խեղճ ստնտուի Տաղտկալի դերը...

Բայց դուռը բացուի, Նոր հիւրեր կուգան՝ կիներ ծաղկազարդ Ու խումբ խումբ մարդիկ, ծեր, երիտասարդ. Պատրաստ են աբղէն սեղաններ կանաչ, Ամենքն ալ գուարթ, շարուն ծախ ու աջ. Ձեռքէ ձեռք Թուշին Թուղթերը խաղին, Ոսկիներուն պէս փափուկին դեղին իրենց աչքերը տենջանքով ազահ, Ու տեղ տեղ պոռթկան անէծք կամ քահրահ. Յաջող Թէ ծախող՝ բայց միշտ յուսախար Կը սրբեն պաղ պաղ քրտինքին տարափ. Որ ծածկէ իրենց ճակատը զուռտ: Պերճուհիներն ալ խաղան անընդհատ. Հիմա յուզուած են, մերթ րաջ՝ մերթ տ'լար Շահու՝ կորուստի կը մղեն պայքար. Այն Թուղթեր իրենց սիրոյ են Թերթեր, Հիմա կատարեն իրենց ազնիւ դեր. Ու սիրտ մը զգայուն ցոյց կուտան յայտնի Որ գալարելով փոճիկի ու հատնի:

Անկողին երթան երբ այդ շողայ, Երբ հաղիւ իրենց սիրուն երախայ Գունէն արթնցած՝ Թեւերը ճապուկ Բանայ զարմացած՝ ժպտի անմեղուկ: Պատկերն յիշեցէ՛ք, համայնը մը զոնէ Տուէ՛ք ձեր գաւկին, այդ միշտ ձեր շահն է:

Մ. ԱՃԷՄԵԱՆ

ԳԱՏԸԳԻՒՂԷՆ ԹԵՎԹՕՆԻԱ

Հոն ալ էի, հոս ալ:

Պատը-գիւղի թատրոնին մէջի Սվաճեանը՝ Թեւթոնեայի մէջ Լիւթ մ'եղաւ:

Տարի մը սրբան որ երկայն ըլլայ—չը հասկցողներու համար ասանկ հրաշք մը չէր կրնար գործել:

Հայ մամուլը, որ ազգը կը ներկայացընէ, չգիտեր թէ ինչպէս բացատրէ այն սքանչալումը զոր կիրակի օրուընէ ի վեր մայրաքաղաքին երաժշտադէտ և նուագասէր մասը կ'զգայ երիտասարդ և տաղանդաւոր արուեստագէտին նկատմամբ:

Սվաճեան տարի մը միայն Պիղէի բազմազան եղաւ:

Ասի ահագին յաջողութիւն մ'է որու համար հոգւով կը շնորհաւորեն զինքը իր ամեն բարեկամները:

Պատը-գիւղցիները Բերա գալու էին

աչքովնին տեսնելու համար թէ իրենց գիւղին վահրամը՝ Թեւթոնիայի Սվաճեանն է։

Այս պղտիկ ձախորդութիւնը նշանակութիւն ունենալէ կը դադրի, երբ կիրակի օրուան յաղթանակը ձեռք կ'անցընէ մարդ։

Ամեն անոնք որ ներկայ էին հոն, եւ կրնամ ըսել, ամենքն ալ դաշնակէ հասկըցող, խորոտ պահանջումներով դացին բազմի իրենց աթոռներուն վրայ և հասկըցան հուսկ ուրեմն, թէ իրենք չէին կրցած այնքան ուզել որքան Սվաճեան կրնար տալ։ Եւ ահա ասոր համար է որ ամեն ըրպէ, սրտազին բայց ցած ձայնով կեցցէներ թուան շատերուն շրթունքէն։

Օրագիրք նուագահանդէսին արուեստական մասին վրայ լի ու լի գրեցին։

«Արեւելք»ի երկրորդ յօդուածը, որ գիտցողի մը գործ էր, կրնայ գոհացնել ամեն անոնք որ դաշնակի դադսնիքին վերահասու են։

Ես, երաժշտական որ և է յաւակնուտութենէ զուրկ, խնդրեցի կիրակի օր ներկայներու մէջէն քանի մը բարեկամներէ որ իրենց տպաւորութիւնները յօդուածիս մէջ աւելցնելու պատիւն ընեն ինծի։

Մաէսթրօ Չուհաճեան արդէն իրը «Արեւելք»ի մէջ հրատարակած է։

Աւասիկ Մարտիրոս էֆ. Յակոբեանի տպաւորութիւնները, որ՝ իբրեւ քաջ երաժշտագէտ մը, մասնաւոր նշանակութիւն մը կրնայ ունենալ, և իր գնահատումը կարենալ մէջ բերելուս ուրախ եմ։

«Սվաճեանը կրնամ համեմատել Վլադմիր աը Բախմանի, մեծանուն Շօքէնեան դաշնակահարին հետ։ Սվաճեանի դաշնակահարութիւնը յանկարծագիւտ բերկրանք մը եղաւ այն ամենուն որոնց ծանօթ է դաշնակին կարողութիւնը, իբրեւ գեղարուեստական արտայայտութեան միջնորդ մը (medium)։ Շօքէնի Նօթթիւռնին ըմբռնումը վերին աստիճանի բանաստեղծական էր, (եթէ տեղ տեղ արտասովոր թոյլտուութիւններ չընէր ինքնիրեն)։ Ռիւպինշիլայնի էթիւտին նուագածութեանը մէջ Բատէրէվսքին յիշեցուց։»

Գառնիկ էֆ. Ֆնտըլեան ալ կը գրէ․

«Գիտէի թէ Սվաճեան ճշմարիտ արուեստագէտ մըն է, բայց կ'երեւի թէ Բերայի նուագահանդէսին վերապահում էր ասոր իբրեւ անհերքելի ճշմարտութիւն ընդունուիլը։ Քիչ մը ուշ էր այս, բայց ո'չ երբ նկատենք թէ հայ մըն է Սվաճեան։

«Ինչ որ մեզ աւելի կ'ուրախացնէ՝ սա է թէ Սվաճեան ամէն անգամ որ ըսուի, իր տաղանդին վրայ նոր նոր յայտնութիւններ ընող արուեստագէտ մըն է։ Եւ գեղարուեստից, ինչպէս ամէն բանի մէջ, փոքր յատկութիւն չէ ինքզինքը գերազանցել ամէն անգամ։

«Բարձր նուագներու ըմբռնումին և զգացողութեան օգնելու համար, մտաւոր ընդարձակ մշակութեան մը առաւելութիւնն ունի, այն որ անհրաժեշտ պայման է առաջնակարգ դաշնակահար մը ըլլալու։»

Պարոն Հ. Փ. հետեւեալ երկտողը զրկած է․

«Սվաճեան եթէ ուզէ իր անուան վերջի վանիլը «ովքի»ի փոխել, ապահովապէս մեծ տաղանդի տէր և առաջին կարգի արուեստագէտի համբաւը պիտի վայելէ... հայերու մէջ։

«Ես կը մազթեմ որ Եւրոպացիք մոռցնել տան իրեն այն տարուան մը դառնութիւնը որ Գատը-գիւղ սկսաւ Բերա վերջանալու համար։»

Չարաճճի օրիորդ մ'ալ՝ հետեւեալ տողերը կը գրէ․

«Հիւանդութեան պատճառաւ չի կրցայ ներկայ գտնուիլ Սվաճեան նուագահանդէսին։ Բայց իբրեւ տկար երաժշտագէտ մը, խնդակցութիւնս չեմ կրնար զրուպել, երիտասարդ դաշնակահարին տարած փառաւոր յաղթանակին համար։ Եթէ պէտք ըլլար, սիրով գնչուհի մը ըլլալ պիտի ուզէի, իմ վարդս իրեն տալու համար, պայմանաւ որ իտալացի նաւագետին պարտէզէն չի գողնամ։»

Այս համակրական և գնահատող վկայութիւններէն ետքը, ինձ միմիայն կը մնայ սեղմել ազնիւ Սվաճեանի ձեռքը, և մաղթել որ իրեն համար ամեն սրահ,

ուր որ ինք պիտի նուագէ, մէյմէկ թեւ-
թանկայնէր ըլլան:

Նրիտառարդ բանաստեղծ-դաշնակահա-
ւը քիչ օրէն Նդիպատոս կ'ուղեւորի, հոն
ալ իր տաղանդը փայլեցնելու համար: Եւ
տարակոյս չունիմ որ ի մօտոյ իմ կէս-
հայրենակիցներս ալ, մեզ պէս, հայ ար-
ուեստագէտի մը փառաւորութիւնը տեսնե-
լու հաճոյքը պիտի ունենան:

«Շիտ'տ ալէք», ուրեմն.

Յ. ԱԼՓԻԱՐ

ԵՐԹԱՔ ԲԱՐՈՎ

(ՍԱՐԱՅ ՊԱՏՄԱՌԹԻՒՆ)

Վերջապէս բարեկամուհւոյ մը տունը
տեսայ զայն: Շատ, խիտ շատ անգամ-
ներ խօսած էր ինձ անոր վրայ, ամէն
անգամուն ալ վերսկսելով նոյն գրուածի-
քը զոր կը վերջացնէր անփոփոխապէս սա
բառերով.

«Պէտք է որ ճանչնաս զինքը. վստահ
եմ թէ հոգւոյդ չափ պիտի սիրես:»

Այս գովեստները կը գրգռէին, կը զայ-
րացնէին զիս: Անբնական կը գտնէի զա-
նոնք կնոջ մը բերնին մէջ, և յետոյ, ե-
թէ այդ գովեստները ճշմարիտ են, կ'ը-
սէի ինքնին, ո՛րքան արդեօք ես իմ ար-
ժանիքս կը կորսնցնէի իմ բարեկամուհ-
ւոյս քով, երբ այն աղջիկն՝ որու վրայ
ինք միշտ կը խօսէր՝ իր սրտին, իր յար-
գանքին այնքան մեծ մասը իրեն գրաւած
էր: Իմ անձնասիրութիւնս զիս անտանելի
սանձանքներու կ'ենթարկէր՝ երբ կը խոր-
հէի թէ իր մտերմուհւոյն յիշատակին քով
իմ յիշատակս իսկ կը ջնջուէր, կ'անհե-
տանար թերեւս բարեկամուհւոյս մոքին
մէջ և ես կ'զգայի այն ատեն թէ կը ծնէր
յիս զգացում մը որ արդէն դառն ժամեր
անցընել տուած էր ինձ կենացս մէջ. համբ
անխօսուկ նախանձ մը զիս կ'այրէր, և կը
սկսէի ասել այն զոր իբր հակառակորդ
մը կը նկատէի:

Վերջապէս ճանչցայ զայն:

Ճօրն և շնորհալի ձեւերով աղջիկ մ'էր,

բարձր հասակով և մարմնի սքանչելի հրա-
պոյրներով, հարուստ գեղեցկութիւն մը,
մէկ բառով: Սուգի հագուստները և սեւ
ու առատ մազերը որոնք դժուարաւ բռ-
նուած էին իր գլխուն վրայ, աւելի փայլ-
կուտային իր փափուկ մորթին: Թեթեւա-
պէս թուի դէմքի մը վրայ, վառվռուն
աչքեր կը պահուէրտէին երկայն թարթիչ-
ներու ետեւ, արտեւանունքի կամարին
տակ, և այն բոցերը որք այդ աչերէն
դուրս կը ժայթքէին, յակամայս կը ստի-
պէին զիս սքանչացման ականարկ մը նետելու
իր կտր դէմքին, իր կարմիր, այրող չըր-
թունքին, իր թաշաղեղ ծնօտին վրայ:

Այս հրապոյրներով զարդարուած կը
տեսնայի ես այն էակն՝ որ մինչեւ այն
օր իմ մղձաւանջներուս ուրուականն եղած
էր:

Ի՞նչ զգացի զայն տեսնալով: Սէր չէր
կրնար ըլլալ անշուշտ: Ես որ ատած էի
զայն, չէի կրնար այնքան շուտ անցնիլ
մէկ զգացումէն միւսին, բայց իմ ցատումս,
իմ քէնս մեղմօրէն մարիլ սկսան: Գաղտ-
նի մղում մը զիս մօտեցուց այդ աղջկան
և մտադրեցի զայն մօտէն քննել: Յու-
սախաբութիւնն էր թէ համակրանքը որ
զիս կը մղէր: Այդ վայրկեանին չէի կըր-
նար որոշել:

Այդ օրը, շատ քիչ խօսեցաւ և ես
տուն վերադարձայ, հոգիս յեղաշրջուած
անօրինակ տազնապով:

Նրկար ատեն խորհեցայ անոր վրայ,
պատրուակներ, պատճառներ իսկ ստեղծ-
ելով ինքնիրենս՝ զիս համոզելու համար
թէ չէր արժէր որ անով զբաղի. բայց չի
կրցայ յաջողիլ. անոր յիշատակը կը վե-
րածնէր միշտ մօրիս մէջ:

Նրկու օր ետքը նորէն տեսայ զինքը,
և ամբողջ գիշերը զայն աչքէս չհեռացու-
ցի: Իր խօսքերէն մէկը չկորսնցուցի. քիչ
խօսեցաւ, բայց ո՛րքան հրաշալի կերպով
գիտէր իր գաղափարները բացատրել: Ա-
ռօրեայ, հասարակ խօսակցութիւն մ'ի-
զաւ մեր այն գիշերուան խօսակցութիւնը,
բայց ազոր մէջ իսկ որքան խելք, որքան
սրամտութիւն ցցուց:

Քիչ մ'աւելի աղէկ կը ճանչնայի զայն
հիմայ, բայց նախագգացմամբ դուշակած

էի թէ ինք եւս զիս կը դիտէր. և այդ դա-
ղափարը զիս կ'ըմբոստեցնէր:

Ինչ, զիս մօտէն քննելու, զիտեւո-
յաւակնութիւնը. կ'ունենար իմ գործերս,
իմ խօսքերս, իմ ըրածներս ամբողջ պիտի
տեսնար, զանոնք իր յիշողութեան մէջ
պիտի նշանակէր, օր մը թերեւս պիտի
դատէր իսկ զիս, և ինձ ալ կարգ մը թիւ
մը պիտի տար ամէն անոնց մէջ զորս
մինչեւ այն օր ճանչցած էր: Այնքան վե՞ր
կը դատէր արդեօք. ինքզինքն ինձմէ, ին-
չո՞ւ իմ վրաս, այդքան բարձրէն կը նայէր:

Այն ատեն, կը սրտմտէի ես. յետոյ
հոգւոյս այս փոթորիկներուն հանդար-
տութիւն յաջորդելով, աւելի ներողա-
միտ, աւելի բարետես աչքով կը սկսէի
տեսնել իրերն: Եթէ զիս կը դիտէր՝ ապա-
ցոյց մը չէ՞ր այդ ինձ նկատմամբ ունե-
ցած հետաքրքրութեանը և կա՞ր արդեօք
բան մ'աւելի փաղաքիչ իմ անձնական
արժանապատուութեանս համար:

Բայց ինչո՞ւ, կ'ըսէի այն ատեն, ին-
չո՞ւ այնքան անտարբերութիւն կը ցուցնէ
ինձ նկատմամբ, և այս յուսախաբու-
թիւնն իմ հոգւոյս երեսը կը հանէր նո-
րէն իմ հին բարկութեանցս մըուրը:

Երկար ատեն, այս երկու ներհակ
զգացումները զիս տարուբերեցին: Անձ-
նասիրութիւնը յաղթեց վերջապէս այս
պայքարին մէջ, և ես իմ տագնապներս
թաղեցի երջանկութեան երազներու մէջ:

Երբ դարձեալ տեսայ զայն, ալ եւս
առջի անտարբեր, անհոգ աղջիկը չէր:
Վեհ կերպով մը ի տես կը բերէր իր հոն
զեղն, բայց կանաչի սլշրանքն ալ աւել-
ցուցած էր անոր: Իր կուրծքն եւ ուսերն
թեթեւ մը մերկացուցած էր, ցուցնելով
իր հրապոյրներուն փոքր մէկ մասը և այդ
երեւացող մասն ինչէ՞ր երեւակայել կու-
տար ինձ:

Ժպտեցայ, ինքն ալ հաղիւ նշմարելի
ժպտա մը ունեցաւ, տեսնելով արդուզար-
դիս մէջ դրած խնամքս, խնամք մը որ կը
մատնուէր մինչեւ իսկ պիւրերուս ոլոր-
ուածքովն, մինչեւ իսկ փոքիկապին ծաւ-
րերովը:

Զիրար հասկցած էինք, բայց երկուքս
ալ հպարտ, կը ջանայինք չմատնել այն

զգացումներն որք մեր մէջ կը զարթ-
նուին:

Այն գիշերը, ժամերով խօսեցանք տ-
մէն նիւթերու վրայ, բաց ի մէկէ որ
մեր բառերուն տակ կը ծածկուէր: Հա-
մակրանքի վրայ իսկ խօսեցանք, քայլ մը
եւս և սիրոյ դաշտին մէջ էինք երկուքնիս
ալ, բայց այդ քայլն ոչ ես, ոչ ալ նա հա-
մարձակեցաւ առնել, և իրարմէ բաժնուե-
ցանք, երկուքնիս ալ դժգոհ: Որոտացանք
սակայն զիրար տեսնել քիչ ատենէն ի
Մօտա, սիրահարներու խորհրդաւոր ժա-
մադրաւայրը:

Յաջորդ օրն, ամառուան գեղեցիկ օ-
դով մը, մաքուր անաղարտ երկնքին տակ
որոյ կապոյտ թափանցկութիւնը կ'աւել-
նար լուսնին անուշ ճառագայթներովը,
Մօտա կը գտնուէինք:

Պահ մը բաժնուեցանք մեր ընկերնե-
րէն, և բով բովի բաւելով սկսանք հե-
ռանալ, գիշերուան անդորր լուսնիւնը
մեր յամրաձայն խօսակցութիւնովը խան-
գարելով:

Այս անգամ, կը խօսէինք վերջապէս
սիրոյ վրայ: Սիրոյ վրայ կը խօսէինք, և
բու անունդ էր, Միւսէ, որ յաճախ մեր
շուրթերուն վրայ կուգար: Այդ գիշերը
միայն հասկցայ թէ բու տաղերդ ինչ ան-
մահ բան մը կը պարունակեն և իմ հեաց-
մանս մէջ կըցայ սիրոյ մէկ հմայի: Նկա-
րագիւրն ընել որու այն վայրկեանէն կը
հաւատայի ես:

Կը բաւէինք նեղ արահետի մը վրայէն
որ գմեղ ծովեզրը կը տանէր: Մօտա, որ
կարծես ծովուն մէջ կանգուն կեցած է,
իր կողին վրայ փորուած կը կրէ այդ ա-
րահետն ուր հաղիւ թէ երկու հոգիի հա-
մար բաւելու տեղ կայ: Երբ յառաջանայինք
հոնկէ, մեր մարմինը իրարու բով սեղ-
մուած: Կ'ընթանայինք այդ նեղ ճամբէն,
մեր շունչը բռնելով, երկուքնիս ալ
զրեթէ արբեցած և անգիտակից այն
վտանգին որու կ'ենթարկէինք անձեռնիս:

Մօտայի ծայրը հասած էինք. կեցանք
ճամբուն վրայ: Մեր առջեւ Մարմարան
կը տարածուէր և հեռուն կը գծուէր հո-
րիզոնին վրայ: Սգանալով զեզանկար
ուրուագիծը, իր մզկիթներու դմբէթնե-

րովն ու մինարէներով, իր սեւ տուներով որոնց գոյները կը հալէին, կը մարէին շուքին մէջ, և այդ շուքին անորոշ մթու- թեան մէջէն կարմիր, գեղին կամ կանաչ գոյներ կը ծակէին կ'անցնէին:

Ուրուագիծը՝ որ աջէն ձախ կ'իջնար կամաց կամաց պզտիկնալով, կը խառ- նուէր հեռուն, շատ հեռուն ծովուն հետ, ու կը շփոթուէր անոր հետ:

Քիչ մը աւելի անդին, պզտիկ միջոց մը ձգելով իր և Սդանսօլի մէջ, անբնակ, անապատ կղզի մը կ'երեւար որու ետին կը շարուէին իշխանաց կղզիները: Այդ ա- հագին հողագոյտերը գիշերուան նուաղ լուսաւորման մէջ հեռաւոր, անտեսանե- լի ցամաքի մը լեռներն ըլլալ կը թուէին:

Այս ամէնը կը կորսուէր վերջին գի- ծին մէջ և իմ ձախս, Ֆէնէր Պաղչէի նի- հար թերակղզին կ'երեւար ծովուն մէջ, հազիւ մեզմէ քառորդ մղոն հեռու: Սքան- չիլի էր ան իր գեղեցկութեամբը, գեղեց- կութիւն մը որուն վրայ մարդիկ շատ քիչ բան աւելցուցած էին:

Այս վտիտ ու ծովին մէջ երկնցած լե- չուն, տեղ տեղ փոթորկալից ծովէն կըր- ծուած ըլլալը կասկածեցներու չափ փա- րակցած, այդ ցամաքի կտորին վրայ շա- րուող նոճիները՝ և փարոսը՝ որ կը կանդ- նէր անոր ծայրը իր սպիտակ աշտարա- կովը և որ գլխուն վրայ կը կրէր հսկա- յական լամպար մը, մեծ ոստանին տարաւամ գիծերը և կղզիներու մար- մրող պատկերը երկինքի վրայ, ջուրի անհուն սաւանը որ բացուած փռուած էր մեր ոտքերուն տակ և կը տարածուէր մինչեւ հորիզոնը, ծովին այդ փափկող երեսն որու վրայ կը ծփային բնութեան գեղեցկութեանց նկարներն, և փարոսին ու լուսնին իրարու հետ մրցող ճառա- դայթները, սիւգին քաղցր փայփայանքը թեթեւ սարսուռներով վայելող ծովն, այս ամբողջութիւնը մարդուս կը ներշնչէր եր- ջանկութեան զգացում մը հեշտ ու վսեմ՝ որոն կը զգար թէ չէր կրնար բաւելամ- բողջ իր հոգին զոր իրմէ դուրս թափել կ'ուզէր:

Սիրահարներու վայրն է Մօտան, բնու- թիւնն հոն իրենց միզակիցը կ'ըլլայ և ի-

րենց բերնէն կը խլէ սիրոյ խոստովանանք- ներ զորս թերեւս երբեք չպիտի ընէին:

Սակայն երկուքս ալ լուռ կը կենա- յինք հոն: Որքան խօսքեր ունէինք իրա- րու ըսելու, այլ այս տեսարանն որ գերբ- նական բան մը ունէր իր մէջ՝ մեր տեղը չէ՞ր խօսեր արդէն և աւելի լաւ չէ՞ր արդ- եօք զիրար գուշակելը: Կը սիրէինք մենք զիրար առանց զայն ըսելու, անստգիւտ, մաքուր սիրով մը որ զմեզ գռնհիկէն վեր, շատ վեր, շատ վեր կը բարձրացնէր: Մեր լուսթիւնը գերազանցապէս խօսող բան մը ունէր իր մէջ:

Բայց նա ինչո՞ւ ուզեց խանգարել այդ լուսթիւնը: Չէ՞ր հասկնար թէ իր ըսել կարենալիքը շատ միջակ բան մը պիտի ըլլար մեզ շրջապատող տարրերուն ըսա- ծին քով: Չէ՞ր ըմբռնէր թէ յիս կուտակ- ւող, աճող սէրն, հմայքով սքանչացումով լեցուն սէրն աւելնալով՝ անդադար զիս պիտի ընկճէր և իր թեւերուն մէջ պիտի նետէր, թէ, միայնակ այդ ժայռին վրայ, անվերջանալի սիրոյ մը երգումը պիտի ընէինք իրարու և թէ՛ մեր սրտերն իրա- րու քով պիտի բաբախէին, իրարու պիտի խառնուէին քաղցր գիրկընդխառնումով մը:

Ինչո՞ւ չհասկցաւ զայդ: Ինչո՞ւ ուզեց խօսիլ. ինչ բան կը ստիպէր զայն սիրոյ նկարագիր մը ընելու, նկարագիր մը իր ե- րեւակայածին պէս: և ինչո՞ւ սիրոյ ալ խառնեց կեանքի պատկերը, երկու սի- րահարներու ամբողջ յարգանքով և գորո- վանքով լեցուն կեանքին: Ո՞վ կը ստիպէր զինքը բառերու հեղեղ մը թափելու և սի- րոյ քով աշխարհը դնելու, աշխարհն՝ իր իրականութիւններով, մարդիկն՝ իրենց դռնհիկ կողմերովն: Եւ այնքան գեղե- ցիկ նկարի մը այդքան խեղճ շրջա- նակ մը չիենել ինչ զժբաղդութիւն գինքը կը հալածէր որ արտասանեց սոսկալի բառ մը—ամուսնութիւն, բառ մը որ թնդաց իմ սրտիս խորն և ամբողջ մարմինս դո- ղով մը պատեց:

Այս բառն, իմ երազս ցրուեց: Երկին- քէն ինկայ հողին վրայ, երազն իրա- կանութեան մէջ, մոռցայ իմ սիրոյս ամ- բողջ բանաստեղծութիւնը:

ինձ այնպէս թուեցաւ թէ բաւը ձիդի մը տակ իմ ուղեղս կ'ընդլայնէր, և աչքերուս առջև երեւցաւ Պաղարի ստուերն, իր սեւ վեղարովն, և թեւերուն տակ իր ահագնեցիկ հատորներովը:

Զգացի այն ժամանակ թէ իմ սիրտս կը սեղմուէր, կարծես երկաթէ շրջանակի մը մէջ պրկուած: Արցունքի երկու կաթիլներ ժողովեցան արտեւանունքին անկիւնները և կամաց կամաց սահեցաւ այտերս ի վար: Իսկոյն ընկերուհւոյս դառնալով ըսի. «Մեկնիր»:

Ինքը չփոթած և բան մը չհասկնալով այս յանկարծական մեկնումէն՝ ինձ հետեւեցաւ: Անցանք նորէն այն նեղ արահետէն, երկուքս ալ դողդոջուն, գացինք ընկերանալ մեր բարեկամներուն որք՝ անտարբեր՝ իրենց պտոյտը կը շարունակէին:

Ընկերուհւոյս խօսք չուղղեցի բնաւ այն դիշերը: Իրմէ բաժնուելէ առաջ «մնաք բարով» մը միայն ըսի, մնաք բարով մը այնքան ախուր ու յուսահատ որ սարսուեցուց աղջիկը, իր ձեռքն իմ ձեռքերուս մէջ դողդղաց, և իմ ականջիս հասաւ աղօտ, մարած ձայն մը, իր ձայնն որ կ'ըսէր

«Կրկին տեսութիւն»

Զպատասխանեցի և փութացի տուն վերադառնալ:

* * *

Այդ օրէն ի վեր տասը տարիներ անցած էին: Այդ տասը տարիներու միջոցին չէի սիրած ես բնաւ: Իրեն, և իրեն համար միայն իմ սրտիս մէջ վառած էր ու մարած՝ սէր մը հեշտ ու անմեղ, սէր մը ինչպէս բանաստեղծը կ'երազեն և ինչպէս ես ալ այն ատեն կ'ըմբռնէի:

Տասը տարիներէ վերջ, վերստին կը տեսնէի զայն: Ամուսնացած էր և մայր երեք զաւակներու:

Փորձառութիւնն իմ զգացումներս փութացուցած էր: Ալ եւս հաճոյքն և միայն հաճոյքը կը փնտռէի ամենուրեք: Վերստին տեսնալով զայն, մտածում մը միայն ունեցայ և ըսի ինքնիրենս. «Թերեւս տալաւն կը սիրէ զիս»:

Կէս ժամու չափ խօսեցանք իրարու հետ: Կը կրկնէի ես իրեն՝ ամբողջ շարքը

պարապ այլ հնչուն բառերուն զոր զեղխութեանց մէջ ապրած ամուսինի մը կեանքը ինձ սորվեցուցած էր: Ինք իր տղաքներովը շրջապատուած, կը պատասխանէր ինձ թախծալից մեղամաղութեամբ զոր չէր ջանար ծածկելու:

Ուղեցի նորէն սիրոյ վրայ խօսակցիլ:

«Սէր, սէր, պատասխանեց ինձ, ալ «եւս սիրոյ վրայ հաւատք չունիմ: Մարդիկ եսասէրներ են: Տասն և հինգ տարու պատանիին մէջ Տօն Ժուան մը կայ որ հեշտութեան, գոհիկ, վատ հեշտութեան՝ լոկ կը բաղձայ: Իր երկշտութիւնն է որ իրեն Պղատօնի զիմակը հագցնել կուտայ»:

«Եթէ մարդիկ սիրեն իսկ, չեն ուղեր հասկնալ թէ ի՞նչ է անձնուրացութիւնը «սիրոյ մէջ: Եսութիւն, եսութիւն ա՛մենուրեք»:

«Այսօր, փոխադարձ յարգանքի միայն կը հաւատամ: Կը պաշտեմ իմ ամուսինս: Ինք գնահատեց գոնէ արժէքն այն բարեկամութեան զոր ես կրնամ տածել զիս «սիրող և յարգող անձի մը նկատմամբ: Կը պաշտեմ իմ տղաքս, և ատոնցմէ զատ «սէր չունիմ: Իմ անցեալս գոյութիւն «չունի ինձ համար: Զեմ կարգար ոչ ձեր բանաստեղծները, ոչ ձեր վիպասանները, մարդկային սրտի այդ նենգաւորները, այդ խաղաղիչները: Իր կեանքին «ամէն էջերը կարգաւ գիտցող մարդուն համար, այդ կեանքը հարկը հատորով «վէպ մը կ'արժէ, իմ յարգանքս ամուսնոյս նկատմամբ և մայրական խանդաղատանքը իմ սիրտս այնքան լեցուցած, «լեցուցած են որ հոն ալ ուրիշ զգացման համար տեղ չէ մնացած»:

Առաջին անգամն էր որ ես կնոջմէ մը այս տեսակ խորհրդածութիւն մը կը լսէի: Ապշեցայ, և ե՛ս, զուարճասէր մը, որ այնքան դիւրին յաղթանակներ ունեցած էի, կորսնցուցի այն անտարբեր վեսութիւնն որ այդ տեսակ մարդոց յատուկ է:

Քանի մը վայրկեան վերջը ոտքի ելայ եւ այս տունէն մեկնելէ, և առ յաւատ բաժնուելէ առաջ այն կիներն՝ որոնք սիրոյն զեղխութիւններէ յափրացած անձի մը ամբողջ եռանդովը կը բաղձայի հիմայ,

ըսի իրեն, նայուածքս իր աչերուն վրայ սեւեռելով .

«Կրկին տեսութիւն»

Այս երկու բառերուն մէջ, իմ ամբողջ հոգիս կրցած էի դնել .

Իսկ նա, առանց ինձ նայելու և շըրթունքը զղուանքի, գարշանքի արտայայտութեամբ կծկուած, պատասխանեց խիստ շեշտով մը .

«Երթա՛ք բարով»

Ահ, ինչ պաղ սարսուռ մը զգացի ես սրտիս մէջ այդ երթաք բարովը լսելով .

Այդ օրէն ի վեր, ալ եւս չտեսայ զայն .

ԱՐԱՅ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ՅԵՇԱՑԱԿՆԵՐՈՒՄ ՄԷՁ

Ինչո՞ւ կը սիրեմ Հռովմէական Հայոց եկեղեցին. ի՞նչ նախապաշարում է աս որ չեմ կրնար վրայէս թոթուել :

Զիս հրապուրողը՝ օտարութեան թեթեւ հոգի է որ կը թռչտի անոր կամարներուն տակ . բարեպաշտներուն ամփոփ ու քաղաքավար կեցուածքն է որ զիս կը գրաւէ :

Այս մարդիկ ու այս կանայք որ յատուկ ձեւեր, խոնարհելու ծնրադրելու մասնաւոր կանոններ, պայմանադրական ամբողջ կարգ ու սարք մը ունենալ կը թուին, որքան կը տարբերին մերիներէն :

Մեր բուն ու եռանդոտ աղօթասիրութիւնը չի կայ հոն . առջի վայրկեանէն կը զգաս անմիջապէս որ մեր եկեղեցին չէ ան . պանդուխտին գետնամած դէմքը, աղային անշնորհ մոլտուքը, ողբի, կոծի, սրտունջի այնքան նմանող ձայները, որ մեր եկեղեցւոյ պատերուն կը զարնուին յաճախ, չեն լսուիր հոն :

Գոհ ու երջանիկ մարդոց տեղն է, Աւետեաց երկիր ուր Վիտը վայելչութեամբ կը մտնէ ներս և ուր Սուգը անգամ չնորհալի կ'ընծայէ ինքզինքը :

Այս էր գէթ յանկուցիչ երեւոյթը որով յստակ ու պայծառ, կը պատկերանայ այս պահուս մտքիս առջեւ Օրթոդոքս

Հռովմէական Հայոց եկեղեցին իր լուսազեղ գաւիթովը, իր բարձր գմբէթին լայնալիճ աղեղովը որ օդին մէջ կը խրոխտայ, իր տաճարին մէջ աղօթելու եկող ընտրուած, զատուած բարեպաշտներու ու բարեպաշտութիւններու ժողովքովը . բաց գիրկ՝ լեցուն խոստումներով և քսան տարիներէ ի վեր յորմէհետէ առաջին յիշատակը պահած եմ, այդ գիրկը՝ ուր նետուելու անբացատրելի փափագ մը կ'ունենայ մարդ առջի տեսնալուն, կը մեծնայ աչքիս, կը մեծնայ, կը լայննայ, կը խորունկնայ ահա ու բաց . . . անդունդի մը տպաւորութիւնը կը թողու վրաս :

* *

Անոր պէս ալ բովի վարժարանը շնորհալի բան մը ունէր :

Ո՛չ . մերիներուն չէր նմաներ այս դպրոցը որ 1874ին՝ իր նոր ճերմակիներկուած երեսովը, մաքուր կանանչ փեղկերովը երկաթէ, պղտիկ չափին ու շնորհալի ձեւին մէջ, շալէի մը կը նմանէր :

Ակամայ կը բաղդատէի այս նորաէն յարկին վայելուչ ճարտարապետութիւնը ու զուարթ երեսը մեր ազգային վարժարանին խարխուլ երեւոյթին, տարապայման տարածութեանը հետ :

Այս խորհրդածութիւնները չըրինք այն ատեն երբ Թարգմանչաց վարժարանին խանդարեալ վիճակէն յուսաբեկ՝ մենք, բազմաթիւ հայ տղաներ, հարկադրուեցանք Հռովմէականաց դպրոցը դիմել :

Կը սիրէինք այն կիսափուլ չէնք որուն հրաժեշտ կուտայինք . ծռած, կտրած զրասեղանները որոնց վրայ արմուկնիս մաշեցուցած էինք . սեղանատունը՝ ո՛չ շատ մաքուր, կերակուրի հոտերով ծանրացած մթնոլորտով : Մեր վարժութիւնները, մեր ծանօթները կը ձգէինք հոս, տնտեսէն մինչեւ կառավարիչը ու վերջին պահուն կը մոռնայինք մեր բոլոր զանգատի պատճառները, ի դէպս ու յանդէպս սրուած պատիժներուն դառնութիւնը, երբ կը պատրաստուէինք ահա ոտուրնիս դնել օտար վարժարանին սեմին վրայ :

Ո՞վ պիտի գտնէինք այս չենքին մէջ ի՞նչ կերպ մարդիկ էին ասոնք որոնց կէս

եւրոպացիի ձեւերուն առջեւ՝ մեր ասիական կերպերը ու շարժումները ծիծաղելի պիտի թուէին:

Ու ծուղակի մը մէջ բռնուածի պէս, յոժարութեամբ ներս մտնելէ վերջը, առջի քայլէն՝ կը զղջայինք եկած ըլլալնու համար, և կամաց մը, անձայն, անշուշտ, նահանջելու փորձութիւնը կը զգայինք:

* * *

Տնօրէնը միջնահասակ մէկն էր. հաստարուն ու կայծակնահար ծառի մը կոճղին տպաւորութիւնը կը թողուր զինքը տեսնողին վրայ. արեւակէզ ու թխաթոյր դէմքին խստութեանը տակ պնդութիւնը կը պահուողէր, յիշեցնելով այն ամպամած երկինքը որ ծիրանի դօտի մը կը պարզէ աչքիդ, չապաստած վայրկեանի մը մէջ:

Իր ալեւորած մազերը կ'երկարէին, կը ծփային ուսին վրայ բանապտեղծի մը, արուեստագէտի մը հողմածածան մազերուն պէս ու ձեւը կ'ածորէր, կուրծքին վրայ փռուած, վեհութեան շուքը կ'աւելցնէր իր պատկառելի երեսին վրայ: Զայնը խորունկէն եկող արծազանգի մը պէս թաւ ու արտում շեշտ մը ունէր:

Այս տնօրէնը Տօթթօր Շիշմանեանն էր: Մենք, նորեկները իր դպրոցին մէջ, ամենէն եւեւ իր հոգածութեանը առարկայ եղանք. հայերէն լեզուն կը սիրէր ու իր բոլոր ջանքին հակառակ՝ անոր արժանաւոր տեղը չէր կրցած տալ վարժարանին մէջ և ահա իրենց լեզուն սիրող ու դիտող պատանիներու ամբողջ խումբ մը մէկէն կուգար իր բովը, իր ձեռքին տակ:

Կը յիշեմ որ օր մը Եղիշէի մէկ հատուածը կարգացնելով հռովմէական աշակերտի մը, հարցուց անոր թէ աշխարհիս որ մասին մէջ կը գտնուէր «ի հեռատանէ» կոչուած երկիրը որ այդ հատուածին մէջ կը յիշուէր:

Հեռատան. աշակերտը մտածեց. մեր կարգին մէջ՝ յառաջագէտներէն մին էր ամեն դասերու մէջ բաց ի իր մայրենի լեզուի դասէն: Շփոթած՝ կը մտածէր իր քաղաքական աշխարհագրութեան բոլոր

յիշատակները ամփոփելով: Պէլուծիստան, Աֆղանստան, Հնդկաստան, Պարսկաստան... Հեռատան:

Ապահովապէս Ասիոյ մէջ ըլլալու էր այս երկիրը. «ստան» վերջաւորած անունները ուրիշ ու է տեղ չէին կրնար գտնուիլ ու համարձակութեամբ դարձաւ Տնօրէնին.

—Ասիոյ մէջ:

Ահագին քրքիշով մը ողջունեցինք այս ապուշ պատասխանը. սրահը ամբողջ թրնդաց մեր քահնաէն. Թարգմանչաց՝ վարժարանը կը ծիծաղէր, իր կորուսած աշակերտներուն վրէժը լուծելով:

* * *

Վերջէն թողուց գնաց զմեռ, ամենուս հոգւոյն մէջ դնելով իր մեծ հոգիէն մաս մը՝ Տօթթօր Շիշմանեանէն: Մերենց մը ծագեցաւ և մեր հռովմէական դասընկերներէն ամբողջ խումբ մը, դպրոցական յարկը ճգելէ ետքը, եկաւ մեր Պատրիարքին մօտ, յիշելով հայրենի տունը ու ան եկեղեցին որ իրենց էր միշտ, որ իրենց առժամեայ հեռացումին համար չէր զադրած իրենց համար ալ աղօթելէ և ուր, երբ ալ դառնան, վստահ էին որ իրենց տեղը պահուած կը մնար ամեն ատեն:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Նրուսագէտի Պատրիարքութեան Կ. Պոլսի փոխանորդութեան օգնական և քարտուղար անուանուած է Ժողովարանի տեսուչ Գէորգ վարդապետ Երէցեան, որուն յաջորդած է Կարապետ վարդապետ Կարապետեան:

—Ուսումնական խորհուրդի ատենապետ Ռէթէոս Էֆէնտի Պէրպէրեան, նոյն խորհուրդին ներկայացուց 30 յօդուածներէ բաղկացեալ «կազմական կանոնադիր ազգային նախնական կրթութեան», որ ընդունուեցաւ և վարչութեան պիտի ներկայացուի վաւերացուելու համար:

—Բ. Դուռը պաշտօնագիր մը ուղղե՞լով Ազգ. Պատրիարքարանին, կը ծանուցանէ թէ Թուրքիոյ մէջ գտնուած ամեն ազգի վարժարաններուն ընդհանուր մէկ վիճակագրութիւնը պատրաստելու ձեռնարկուած ըլլալով, կը յանձնարարէ հրահանգ տալ գաւառներու առաջնորդներուն, որպէս զի հարկ եղած դիւրութիւնն ընծայեն գործողութեան կատարումին:

—Տիգրանակերտի գաւառական ժողովը՝ վիճակին առաջնորդ ընտրել է Մուրատեանց Մելքիսեղեկ եպիսկոպոսը, որ մերժել է այդ պաշտօնը:

—Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեան որ Պայազիտի պատրիարքական փոխանորդ անուանեցաւ Խառն ժողովի վերջին նիստին մէջ, հրաժարական տուել է:

—Համբաւաւոր Հայ երգիչ Պ. Շահլաւեան, Թիֆլիզի Մարինսկի թատրոնին մէջ սկսած է երգել մեծ յաջողութեամբ: Լրագիրները զրուստալից յօդուածներ կը հրատարակեն:

—Թիֆլիզի Արեւելեան թատրոնի ըսկըզնաւորութեան երեսուն և հինգամեայ յօրելեանը մեծ հանդէսով տօնուել է յունուար 28ին, քաղաքային թատրոնին մէջ: Հոծ բազմութիւն ներկայ էր: Թատրոնին ճակատը զրոյմուած էին Ամերիկեանի և Ազամեանի անուանները: Տեղեկագիրը կարգացել է Պ. Ա. Երէցեան: Բեմ ելել էին նաեւ ռուսական, վրացական և ֆրանսական խումբերուն ներկայացուցիչները: Տիկին Լասալ գողտրիկ ուղեւոր մը կարգացել է ֆրանսերէն լեզուով:

—Պրուսաի առաջնորդ Բարթոլոմէոս Սրբազան, որ ժամանակէ մը ի վեր մայրաքաղաքս կը գտնուի, առժամայէս հրաժարական տուել է իր առաջնորդական պաշտօնէն և խնդրել է որ պատրիարքական կամ առաջնորդական փոխանորդ մը զրկուի ի Պրուսա, մինչեւ իր պաքինումը:

—Մնակեանն ալ, Ֆասուլեաններին օրինակին հետեւելով, վերջապէս ձեռնարկած է հայերէն ներկայացումի, որուն յաջողութեան հաւաստիք մըն է իր վարժ ու փորձառու դերասաններէ բաղկացեալ խումբն: Վաղուան ներկայաց-

ուելիք խաղն է Ներկարարը, հեղինակութիւն Տիրան Փափազեանի: Այս թատերախաղին շահեկան հանգամանքը սա է որ տեղական կեանքին մէկ գրուագը կը գրծէ: Կը մնայ հասարակութեան կողմէ ցոյց արուելիք քաջալերութիւնը:

Ն Ե Ր Ք Ի Ն

Բժշկական ընկերութիւնն իր վերջին նիստին մէջ դիւանի ընտրութիւն կատարելով, հետեւեալ կերպով կազմեց զայն. նախագահ՝ Զամպաօ փաշա, դեր-նախագահը՝ Տքթ. Զավթիանօ և Լաւտի, ընդհ. քարտուղար՝ Տքթ. Բաւտօ, մասնաւոր քարտուղար՝ Տքթ. Զարգարեան և Ազամիտէս, գանձապետ՝ Տէլլա-Սուտա Փայիք փաշա, դրողարանապետ՝ Տքթ. Սիւէքուլի:

—Բուսելիի երկաթուղիին պարտաթուղթերուն կարգադրութեան մասին աւատրեան և գերմանական մասնախումբերուն տուած որոշմանը հաւանք է արժեւորելու ֆրանսական մասնախումբը:

—Կրթական նախարարութիւնը հրահանգ ուղղելով գաւառաց կրթական տընօրէններուն, յանձնարարած է որ Թուրքիոյ մէջ հաստատուած գիշերօթիկ և ցերեկեայ երկրորդական վարժարաններու աշակերտաց ու պաշտօնէից թիւերը պարունակող ցուցակ մը պատրաստելով զըրկեն:

—Իմրօզ կղզիին մէջ երկրաշարժի սատիկ ցնցում մը պատահելով, երեսունի չափ տուններ փլել են: Բնակիչները լեռները փախել են:

—Իսվրէժի չրջակայ Սինէի և Սազըզի մէջ հնոյախոր տակաւին կը շարունակէ Տրապիզոնի և չրջակայից մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է:

—Պասապաի երկաթուղիին արտօնութիւնը Պ. Նակէլմաքերսի շնորհող կայս. Խրատէն ելաւ անցեալ չաբաթ օր: Այս երկաթուղին պիտի շինուի Ալաշհէրէն մինչեւ Աֆիօնգարահիսար, Իւշազէն անցնելով:

—Օսմ. ապահովագրական ընկերութեան հիմնադիր Թէառօ պէյ, Պ. Ռընէ Պօտուի և օսմ. Պանքայի տնօրէնութիւնը

վարչական խորհուրդ կազմեցին: Սըրէա-
կառ Վինսընդ՝ նախագահ, Պ. Լա Ֆիւանդ՝
դեր-նախագահ, Պ. Պ. Ֆոռնի, Վինսընդ
Քայլարտ, Վիքթոր Էֆ. Միգրաչի՝ անդամ:

— Ի նպատակ Զանթաի արկածեալնե-
րուն ի Պոլիս բացուած հանգանակութե-
նէն մինչեւ հիմա գոյացած է 33993 ֆը-
րանք:

— Վեհ. Սուլթանն հարկեր ոսկի շնոր-
հած է բաշխուելու համար կարնոյ այն
աղքատ ժողովրդեան որ ձմեռուան սաստ-
կութեան, տարւոյս երաշտութեան և հի-
ւանդութեան պատճառով կարօտ վիճակի
մէջ կը գտնուին:

— Մաշխաթի և Տէմիզլիի կողմերը
սաստիկ ձմեռ կը տիրէ և առատ ձիւն
տեղացած է: Անցեալ շաբթու Տինարի եր-
կաթուղին երկու օր չէ կրցեր երթեւե-
կել: Գրզլը հիմաք գետը սառեր է, բան
մը որ ցարգ տեսնուած չէր:

— Գոնեաէն կը գրեն թէ այս տար-
ուանին պէս ձմեռ 20 տարիէ ի վեր չէր
տեսնուած: Զերմաշափը՝ ցորեկը գեռօէն
15-20 աստիճան, իսկ գիշերը՝ 27 աստի-
ճան վար ցոյց տուեր է: Աղբիւրները սա-
ռեր են: Ծաղկախոն ու ինֆլուէնցան շատ
փնասներ հասուցեր են:

— Պաղատաի քարանձինաին վարչու-
թիւնը փետրուար 9 թուականաւ հեռա-
գրած է թէ Պարսկաստանի Սինէ քաղաքին
մէջ հնատախտ երեւան ելած է: Երկու օր-
ուան մէջ վարակեալ ուխտուն անձերէ
կէսը մեռեր են:

— Առողջապահական ժողովին որոշ-
մամբ Մարսիլեաէն եկող նաւերուն վրայէն
քարանձինաին վերցեր եւ տեղը բժշկական
խիստ այցելութիւն հաստատուեր է:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Քափրիվի նախարարապետին ներկա-
յացուցած շինուորական օրինագիծը քըն-
նելու համար Ռայխսթակէն կարգեալ
յանձնաժողովը մերժեր է ծրագրին կա-
րեւորագոյն տրամադրութիւնն, որով զի-
նուորական ծառայութեան տեւողութիւնն
երկու տարիի կ'իջեցուի, և ասոր փոխա-
րէն՝ միայուն կերպով զինուոց ներքե գըտ-

նուող զօրաց թիւը կ'աւելցուի, ըստ կարի
մեծագոյն թուով զինավարժ մարդիկ ու-
նենալու համար առաջիկայ պատերազմին
մէջ: Կ'ըսուի թէ Քափրիվի կոմս կայսեր
հետ կը խորհի լուծել երեսփոխանութիւնն
և նոր մը ընտրելու համար հրաւեր կար-
գալ ազգին:

— Պէրլինի իրաւագիտական համալսա-
րանն, որոյ վճիռին ենթարկուած էր
Զաքարի ժառանգութեան խնդիրը, ու-
մաններուն իրաւունք տուեր է:

— Բանամայի խորհրդարանական յանձ-
նաժողովն որոշեց առժամանակեայ տեղե-
կաբեր մը կարգել, շարունակելով հան-
դերձ իր աշխատութիւններ: Տեղեկաբեր
կարգուեր է ատենապետ Պ. Պրիտն:

— Պ. Կլատսթոնի մեծ ծրագիրն օր-
ուան կարեւորագոյն խնդիրն է Անգլիոյ
մէջ: Նախարարապետն իր ճառով ապա-
ցուցած է թէ Անգլիա բան մը կը պարտի
իւլանտական խնդրին մէջ:

— Պ. Չէմպրէյն և Պ. Կոչէն խափա-
հարուածեցին կլատսթոնեան ծրագիրը,
զոր պաշտպանեցին Պ. Ճօն Մօրլի, Պ.
Ճէյմս Պրայս և այլք:

— Ֆրանսական ընկերութիւնն արտօ-
նութիւն տողալ նաւահանգիստ մը չի-
նելու Եւրաստոքիա (Պրիմ) և երկաթուղի
մը, որով այս նաւահանգիստ կցուի ռու-
սական երկաթուղիներու ընդհանուր գի-
ծին:

— Միացեալ-Նահանգաց կառավարու-
թիւնը առաջարկներ ըրեր է Քոլումպիոյ
կառավարութեան՝ Բանամայի ջրանցին
արտօնութիւնը Ամերիկացուց յանձնելու,
փոխանակ Ֆրանսացոյց, որը չեն կրցած ի
գլուխ հանել զայն: Քոլումպեան կառա-
վարութիւնը կը քննէ երկու կողման ա-
ռաջարկները:

— Էֆէլէան շինութիւններու ընկերու-
թիւնն, որոյ տնօրէնը նոյն ինքն Պ. Է-
ֆէլն է, վերջին նիստին մէջ որոշեր է
փոխել ընկերութեան անունը:

— Ձէքի փաշա հրաժարեր է Եգիպտոսի
կրթական նախարարութենէն: Հանրօգուտ
շինութեանց նախարար կը մնայ: Նախա-
րարապետ Ռիազ փաշա կրթական նախա-
րարի պաշտօնն եւս ստանձներ է:

